# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՆՔԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հանքավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հանքավան, (098) 888842, h.hakopyan@mail.ru

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2017թվականի N 30

### ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՆՔԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2017ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 7-Ի ԹԻՎ 8 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 13-րդ հոդվածի 3-րդ մասի պահանջներով.

Հանքավան համայնքի ավագանին որոշում է`

1. Հանքավան համայնքի կամավոր խնդիրների իրականացման կարգը սահմանելու մասին:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Գասպարյան Արմիդա

Հայրապետյան Սամվել

Ղարիբյան Ռոզա

Չիտչյան Արման

Սահակյան Ռադմիլա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ` ՇԱՀԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ
# ՀԱՆՔԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հանքավան համայնք
ՀՀ, Կոտայքի մարզ, գ.Հանքավան, (098) 888842, h.hakopyan@mail.ru

## Ո Ր Ո Շ Ու Մ

07 ՕԳՈՍՏՈՍԻ 2017թվականի N 31

## ՀԱՆՔԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի դրույթներով.
Հանքավան համայնքի ավագանին որոշում է՝

1.Սահմանել Կոտայքի մարզի Հանքավան համայնքի 2017թվականի կամավոր խնդիրների լուծման նպատակով սեփական լիազորությունների իրականացման կարգը և դրանց համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները՝ համաձայն հավելվածի:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ընդունմանը հաջորդող օրվանից:

Կողմ -5 Դեմ -0 Ձեռնպահ -0

Գասպարյան Արմիդա
Հայրապետյան Սամվել
Դարիբյան Ռոզա
Չիտչյան Արման
Սահակյան Ռաղմիկա

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՇԱՀԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ

Հավելված
Հանքավան համայնքի ավագանու 2017թվականի
օգոստոսի 7-ի N31-որոշման

# ՀԱՆՔԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2017ԹՎԱԿԱՆԻ ԿԱՄԱՎՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ԿԱՐԳԸ

1,Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Հանքավան համայնքի / այսուհետ համայնքի կամավոր խնդիրների,համայնքի ղեկավարի կամավոր լիազորությունների / այսուհետ լիազորություններ / իրականացման կարգը:
2.Լիազորությունների իրականացման կարգը սահմանվում է<<Տեղական ինքնակառավարման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 10-րդ և 11-րդ կետերի և 18-րդ հոդվածի 1-ին մասի 7-րդ կետի համաձայն:Համայնքի կամավոր խնդիրներն այն խնդիրներն են,որոնք կարող են իրականացվել հավելյալ ֆինանսական միջոցների առկայության դեպքում:
3.Համայնքի Կամավոր խնդիրների իրականացման համար անհրաժեշտ ֆինանսական միջոցները տրամադրվում են տվյալ տարվա համայնքի բյուջեով նախատեսված ֆինանսավորմանը համապատասխան:
4.Համայնքի ղեկավարը կամավոր լիազորություններ իրականացնում է հետևյալ բնագավառներում Աշխատանքի և սոցիալական ծառայության բնագավառ
1)հաշմանդամների,կերակրողին կորցրած ընտանիքների,սոցիալապես անապահով այլ խավերի սոցիալական պայմանների բարելավման համար յուրաքանչյուր դիմող բնակչին տրամադրել մինչև 30000 / երեսուն հազար/դրամ:
2)30 000 երեսուն հազար դրամից ավել գումարի դեպքում հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում:
2)մինչև 2 000 000/երկու միլիոն/ դրամ պահանջվող աշխատանքների իրականացումը վերապահել համայնքի ղեկավարին:
2)2 000 000 /երկու միլիոն/ դրամից ավել գումարի դեպքում հարցը քննարկել համայնքի ավագանու նիստում:
6.Համայնքի ղեկավարը սեփական լիազորություններն իրականացնում է համայնքապետարանի աշխատակազմի միջոցով:

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ՇԱՀԵՆ ՀԱԿՈԲՅԱՆ